



ՇՆԱԲԹ

Պուշկարիոյ համար սարկահան 10 ֆրանկ : Վե սուսանայ 5 ֆրանկ : Արտասահմանի համար սարկահան 12 ֆրանկ : Վեցսահանայ 6 ֆր. ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Կրօնքիսկի ևս չի սրտիս :

Կուսակցական տպար 20 սահարի հ :

Կուսակցական տպար 20 սահարի հ :

Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна.
Redaction du journal «Charjourn» Varna (Bulgarie).

Handwritten notes:
Venne (Autrich)
Hollern (Autrich)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՐԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ԹՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ.
АДВОКАТЪ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

—)(—

Պուշկարիոյ և առ հասարակ արտասահմանի գրեթէ բոլոր հայաբնակ քաղաքներուն մէջ, հնար չկայ չորս քայլ առնել առանց հանդիպելու հինգ տարբեր կարծիքի հոսանքներու :

Իրաց այս զիճակը ահա այնպիսի միջնորդութեամբ կը ստեղծուի որ զիւրութեամբ կաճին ընկերութեան : մը աւերող միջոցները : Կեղծաւորը, խաբերան, շահախնդիրը և ստոնց բազմաճիւղման արտասահմանութիւնները անգուր կը շարունակեն իրենց արհաւիրի գերակատարութիւնը, որ կարտագրէ այն քառասյին բարեկանական գրութիւնը ուսկից այսօր քիչ շատ ամէն տեղ մեր ազգային գործերը կը տառապին :

Անձնական հաշիւը մէկ կողմէն և շահու, բարեկամութեան, տխմարութեան պատճառներով կոյր ու գահավէժ «հետեւողութիւնը» մ.ւ.ս կողմէն մեր ազգային գոյութեան խարխուրեցողութեան կը վերածեն :

Մենք շատերը կանխատեսանում զազախարներ ունին ոչ միայն ներկայ այլ և ապագայ ամէն խնդիրներու վրայ : Որոշ անձերու վարձու տուած են իրենց անձնական կարծիքները : Ի սէր «բարեկամութեան» կը յօժարին բատարանալ մինչեւ ամենէն յայտնի ապօրինութիւններ պաշտպանելու աստիճան :

Խաբերան և իր արբանեակները ծափ կը դարնեն, տխմարը կը ժպտի, ժողովուրդը կը վարանի, իսկ ողջամիտը ցաւ կիմանայ : Բայց ո՛չ ոք մտածելու հոգը չտանձնեց թէ արգեօք չի կա՞յ ճար մը յաւէտ աղատուելու այս անհատնում վէճերէն, մեկուսացնելու մեծամիտ ազա մը, պոռոտախոս խաբեբայ մը, կասկածելի գործիչ մը, յիմար թափերու ենթակայ քարոզիչ մը, մէկ բառով, զօրեղ շունչով մը մէկ անգամէն մարելու պարբերաբար պոռթկացող անանդի խոսքութիւնները :

Մենք կը մոռնանք թէ ամէն

քաղաքի, ամէն կեդրոնի մէջ, մեծ ուժ մը ունինք զոր դժբախտաբար իբրև անպէտ ու անօգուտ սարք կը թողուք : հոգային խաբերու տակ մնացած ոսկիի հանքերու պէս : Այդ ուժը, մեր երիտասարդութիւնն է, որ շատ հեղ անհարկի ու անպատելի մոլորումներու կենթարկի և կը մեղանչէ իր բարձր կոչման դէմ :

Կը յիշենք որ տակաւին անցեալները երիտասարդութեան կողմէ անստորագիր շրջաբերական մը հրապարակը կողողէր, ամենէն ամօթալի եղանակով :

Հետեւեալ օրը ուրիշ տխմար մը կը ժողովէր յանուն ժողովրդի համակրական հաստատիք մը ընել այնպիսի մէկուն որ այդ համարանքի հիւլէն անգամ չէր կրնար ներշնչել :

Ի՞նչ երիտասարդութիւն է այս որ իր իրաւունքները բռնաբարել կուտայ, կանպատուի առանց խլրտելու, առանց ըմբոստանալու, գոյթակողութիւններու, անիրաւութիւններու առջեւ, և որ եթէ անտարբեր ալ չէ, կը դոհանայ միայն պղատոնական փոքրիկ ցասումով մը կամ իր պարսքը աւարտած կը նկատէ ուսերը նողկանքով մը ցնցելով :

Երիտասարդութիւնը ամէն բան է ազգի մը համար, անոր ջիւղն ու արիւնն է : Եւ տարիքի երիտասարդութեան չէ որ կակնարկենք, այլ մանաւանդ սրտի և զգացումներու : որովհետեւ քան տարեկան ծերեր կան ինչպէս վաթսուն տարեկան երիտասարդներ : Գործելու, մարտաւելու ներքին բարոյական ազնիւ ուժ մը կըրոյն է միայն երիտասարդ :

Ուրուս խորոխտ պիտի մը, սեւ սեւ մազեր, հոժկու մարմին մը, եթէ զուրկ են այն ներքին զգացումէն որ կը կազմէ երիտասարդութեան լուսնի շահը, ոչինչ է այն լեռի գանկին քով որ սակայն ողջ գազափար մը կը սնուցանէ, այն ծերունական լանջքին քով որ ազգին սիրտը կ'եռայ ու կը դեռայ :

Պէտք է որ այդ տարրը իրար ճանչնայ, իրարու մօտենայ ամէն

քաղաքներու մէջ, ձեռք ձեռքի տալով թուժք մը կազմէ ամէն ստոր էնթրիկներու, դաւերու, խռովութիւններու դէմ :

Գրեթէ ամէն տեղ, մէկ մէկ «երիտասարդաց միութիւն» անուն ընկերութիւններ ունինք, որոնք իբր թէ վերեւի պաշտօնը կատարելու համար հիմնուած են : Բայց եթէ մօտէն դիտուին, պիտի տեսնուի թէ երախաներէ բաղկացած անկարեւոր բաներ են շատ հեղ, որոնցմէ խոյս տալը արժանապատուութեան խնդիր կը համարի ամէն խոհուն երիտասարդ :

Այս, պէտք է ունենանք ամէն տեղ երիտասարդական միութիւններ, որոնց հիմը ըլլայ գարուս ողին, և ամէն հայ սր 25 տարեկան է, պատուաւոր է, և որոշ զբաղում և գիրք ունի, մասնակցի անոր :

Երիտասարդներու միութիւնը, ընկերութիւն մը չէ, ոչ ամուսնացած ունի, ոչ գանձանակ : այլ միայն գիւտն մը, որ անհրաժեշտ պարագաներու մէջ իսկոյն ժողով կը գումարէ ծագած խնդիրը լուսարանելու, վճռելու, գայթակղութեան առաջք առնելու, վերջապէս մեծ ուղղիչներէն մէկն ըլլալու հանրային կարծիքին :

Միութեան նպատակը պիտի ըլլայ ազգին շահը : Իսկ նպատակին հասնելու միջոցը փոխադարձ բարեկամութիւնը անդամներու մէջ :

Ձեռք կարծեր որ տարին 2—3 գումարումէ աւելի ընել հարկ ըլլայ : Բայց ասոր փոխան ի՞նչ ազգային ձեռնարկներ կրնան ծնիլ, ի՞նչ փրկարար ուղիներու մէջ կրնան գրուիլ բոլոր ազգային գործերը : և ինչ անյաղթելի մարմին մը կազմուած կըլլայ ամէն կարգի գաղտնիքու դէմ, խափանելով կոյր հետեւողութեան, կոտորածի և անձնականութեան այս տխուր շրջանը :

—)(—

ՀԱՅԱՍՏԱՆ ՍՈՎԱՏԱՆՁ

Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ն

—)(—

Գ. ՑՈՒԹԱԿ

Գումար Գ. ցուցակի	101 ֆր.
Յ. Կ.	5 "
	106 "

ԱՒԱԳ ՇԱՐԱԹ

—X—

Արշակ Զօպանեանի գրքոյկէն հատուած մը թարգմանել ու «Շարժում»-ի տալ, շատոնց միտքս դրած էի : Ու ընտրեցի Մաղկազարդի շարաթը : Նիւթը համառօտակի կամփոփէ քառասորգի վերջին օրերը մեր տաճարներուն մէջ :

Մեր եկեղեցին, ի՞նչ ալ ըլլան իր տգէտ հոգեւորականները, մեզի համար ունի իր բանաստեղծութիւնները՝ հեթանոսութեան մշուշին ու քրիստոնէութեան լոյսերուն հետ խառնուած ներդաշնակութիւններ : Եւ ի՞նչ հրաշալի կըլլար, եթէ, քրիստոնէութեան այդ հանդիսաւոր օրերուն, մաքուր հոգեւորականութիւն մը, ինքն ալ բոլորովին լոյս սեղանի ճաճանչագեղ լոյսերուն մէջ, կարող ըլլար մեզի պատկերել ինչ որ սրբութիւն է, բանաստեղծութիւն է, աննիւթական և զօւտ աստուածային : Վշտաբեկ հոգիներ, ցաւած ու մորմոքուած սիրտեր, յաւիտենականապէս ջախջախուած, սխոմանք կը գտնէին մեր հիւն շէնքերուն մէջ, անստոյգ ստուգութիւններուն մէջ, պատկերներու սառած աչքերուն, սեւցած կամարներուն և քրտնած պատերուն տակ :

Եւ այդ ամէնուն մէջ, սրբազան երաժշտութիւնով մը, տիեզերական հառաչանքի մը պէս, իր լացող ու լացնող մրմունջներովը, որ դարերու մէջ ջախջախուած հայութեան արիւնտ սրտին բողբոն է, պաղատանքն է, ողորն է անողոր գէպերու և արկածներու տակ, արցունքի հեշտութիւնը կուսնայինք ամենքս ալ, և թերեւս, նորոգուած նորա-

ստեղծուած ազգային համընդունելու մէջ, կը մտնայինք ինչ որ ցածու թիւն է հողիներու մէջ, ինչ որ գառնութիւնն է ժանգոտ սրտերու մէջ :

ՇԱՐԺՈՒՄ

«Վիճակը արբան, մէկը եւրոպացի այն առաջին գրողներէն, սրտնք զրազած են քրիստոնեայ Հայաստանով, կը գրէր վերջին գարու սկիզբէն. «Կարելի չէ տեսնել բան մը այնքան աւելի պերճախօս, աւելի սրտաշարժ քան թէ աղօթքն ըրբան մը այնքան աւելի մեծափառ քան թէ հայկական արարողութիւնները:» Հայը, որ չունեցաւ երեք իսկապատիւ թատրոն մը, կրօնական արարողութեան մէջ երեւան կը բերէ թատերական խորին զգացում մը, և ասոնք խորհիլ կուտան Յունաստանի վաղնջուց թատրոնին վրայ: Պատարագը ամբողջապէս սղբերգութիւն մըն է: Պատարագը, գլուխը բաց, ոտքերը առանց կօշիկի, բազկատարած, փաղփուն շուրջառը վրան, մոմերով, ոսկիներով ու ծաղիկներով լուսավառ սեղանին առջեւ կանգուն, ծնրագիր ամբօխին աչքերուն կը պատկերէ տառապող մարդկութեան ըզմանքը զէպի արդարութեան ու զեղեցկութեան աղբերակը:

Տաւալը կը փոխուի օրերու համեմատ: Աւագ հինգշաբթի բոլոր ձերմակ կը հագնի եկեղեցին և Աւագ-ուրբաթ օրը կը սպառնալի անհուն թուի վարագուրով մը որ խորանը կը ծածկէ: Եկեղեցին,

Աւագ-հինգշաբթի գիշեր, իր բոլոր լոյսերը կը մարէ՝ խաւարին մէջ եղանակելու գերագոյն ողբերու «Միջէտէտէն». Ծաղկազարդի կիրակի իրիկունը՝ եկեղեցին կը ներկայացնէ վերջին դատաստանին խորհրդապատկերը. կարկուտաբար, զոյգ վարագուրին առջեւ ծնրագիր, Գրախարհին մէջ ընդունուելու շնորհը կը հայցէ: Եւ մերթ, նախկին հեթանոսութեան մնացորդներ կը պատկեն քրիստոնէական այգի թախծալից առամին պարզութիւնը: Այլակերպութեան օրը, հանդիսաւոր թափօրի տանն, վարդ կը ցանեն ժողովուրդին վրայ և ազանի կը թռչնեն ինչպէս առաջ ուսուցիչները և կաթիլ Անահիտի տօնին, և, Տեառնդ-առաջի նախընթաց իրիկունը, խարոյկ կը վառեն եկեղեցիին բակը ի յիշատայ՝ Միհրի տօներուն () :

Արշակ Զօպանեան

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՍԱԿԱՆԵՐ

—(—

Երկու սրտակից բարեկամներ էինք: Եթէ իրար օր մը չը տեսնէինք, զիտես թէ այն օրը միզ համար սեւ էր: Շատ գիշերներ մէկտեղ կը լուսնայինք, ու ամէն իրիկուն, երբ մեր արամադրութեան սակեղած զգրոցներէն կազատուէինք, կամ ես անոր քով կերթայի կարմրակ եկեղեցին, կամ ան ինձ մօտ կուգար Ս. Գեորգայ բացօթեայ դարան:

() Հաստատուած բանախօսութեան 97 մայրի 9, Աշխարհագրական բնկերութեան սրահին մէջ:

ՎԱՐԴ-ՊԱՏԵՐԻՎՈՒԹ ԵՒ ՅԻՇԱՍԱԿԱՆԵՐ (10)

Այս, միակ տխրութիւնս այդ էր եւ ես անհամբեր կերպով սղատում էի մայրին, որ քննութիւններս վերջացնեմ եւ տեղափոխուեմ Տփլիսի բնակարան զպրօքը: Այնտեղ, ուր մօտիկ կը լինէի հայ ժողովրդին եւ նրա բուն կեանքին իր բոլոր ձգտումներով եւ թէ աւելի զարգացած շրջանի մէջ կարող էի ընկնել:

Այդ յոյսերով անցկացրի մի քանի ամիսները, քննութիւններս սուս, աջողութեամբ անցայ հինգերորդ դասարան:

Միւս ուսումնական տարւայ մէջ նիւթական վիճակս կրկին տակնուվրա եղաւ: Ինձ ապահովող մօրեղբօրս հետ այնպիսի մի գծախառնութիւն պատահեց, որ նա հազիւ կարող էր իր գլուխը պահել. ուրիշն ինձ հիմա աւելի անհրաժեշտ էր Տփլիս տեղափոխուել ու կարող էի մասնաւոր դասեր գտնել եւ ինքս իմ գլուխը պահել, բոլորովին անկախ լինել եւ զբա հետ միասին ուսումնաշարունակել:

Հոկտեմբերին վկայական վերցրի, ընկայ զէպի Տփլիս. երբ ներկայացայ դպրոցի տեսչին, նա պահանջեց վկայականս ուղարկեմ, որ նրա մէջը նշանակեն առաջին երկու ամսվայ թուանշանները: Վկայականս պէտք է գար իմ ազգականիս հասցէով. այդ հասցէն սխալ էր արուած, զբա հա-

տափին վերեւ: Ու երբ օղբ բաց ու ջինջ ըլլար, զուռնիս առած կը քալէիք, մէկ երկու ժամ շարունակ, քաղաքէն դուրս կամ գէպի թաղի գլուխ ու Տեպի յօշոր, կամ գէպի Աւելի վանքը՝ Երեմի վիկի սննոր. այս երկու վայրերն ալ այնքան հրապուրելի ու այնքան հիանալի են իրենց բնական զեղեցկութեամբ՝ որ ամենէն տափակ մտքի տէր մէկուն իսկ, բանաստեղծական խանդ կը ներշնչեն: Օր մը, ապրիլ ամսու չը գիտեմ քանի ինչ էր, Ծաղկազարդի կիրակին, մենք երկուքս ազատ մեր պաշտօններէն՝ գարնան զեղեցութեան հետ, Հայրենիքի անուանացուցիչ օղբ պիտի վայելէինք լիաթոք զբօսներով երկար ժամեր մեր սիրելի վայրերու մէջ: 81 թուականին դեռ նոր էր վերադարձեր Յ. Մ. Տուաութեան զպրօքական: Չ՛մտնէ իր Հայրենիք-Պիթիլիսի Սուլթիկ զիւղը՝ մենք այդ թուականէն սկսած հոգուով իրարու փարիլ ու սրտով սիրելի զիրար. իր դաղափարային հազուագիւտ թուրք, ու լեզուագիտական ու ուսումնական առաւելութիւններու միացած ճշմարտ մարդու, անկեղծ հայրենասէրի մը փափաքը, Պիթիլիսի ամբողջ ժողովրդի սիրելի ու յարգելի բրած էին զինքը, եւ անոնք որ մօտէն ծանչցած կամ տեսած են զինք, իմ այս գրածները շատ համեստ կը գտնեն անոր մասին:

Սուլթիկ՝ Պիթիլիկի բազմամարդ արուարձաններէն մէկն էր 450 առուն զուտ հայրով: 72-80 թուականներին շատ փայլուն ու շատ գոհացուցիչ էր սեղացիներէ կացութիւնն: Այդ զիւրի բնական զիրքը իր շքեղակայի սիդապանձ լիւններէ ձեւացող բաժակաձեւ դաշտը, վերջապէս դաշտերի մարդն ու պտուղները երկնազոյն թաւանները գարնան ու ամբան ամիսներին, եկեմական երկուցի մը կուտան անոր: Դեռ շատ պզտիկ մանուկներ էինք:

Վարժարանը: Շատ ուրախ, զարթ, բոլորովին մաքուր, խելացի, զարգացած, միշտ ցատկոտ ու պարզ երիտասարդ էր. այդ բոլորի հետ միասին շատ համեստ: Առաջին անգամ նրան հանդիպելի մեծ մօրեղբօրս տանը որի փոքրիկ աղջկան տնային դասեր էր սալիս:

Վերջապէս մի օր ժողովեցինք մի քանի երիտասարդներ, որոնցից երկուքը վերջերեւ յեղափոխական գոյժի մէջ մտան եւ մէկը նրանցից բանտարկվեց եւ աքսորվեց սուս կառավարութեան կողմից — Թ. Խեան եւ ճանապարհ ընկանք զէպի Անի ոտքով:

Չեմ ուզում նկարագրել թէ ինչ ոգեւորութեամբ մենք անցանք այդ բաւական երկար ճանապարհը. նոյն գիշերը մենք մտանք Սոջա վանք, ուր գտնվում է Բագրատունիների կաթողիկոսարանը թէ կաթողիկոսների զիւանատունը, լաւ չեմ մտաբերում: Գիշերը անցնելուց յետոյ, առաւօտեան շուտ վերկացանք, սկսեցինք զիտել այնտեղի հնութիւնները — երբ մտանք կիսափուլ կաթողիկոսարանի մէջ, որի հրաշալի կերպով զարգարված պատերը բաւական են գաղափար կազմելու հայկական ճարտարապետութեան մասին, բոլորիս սիրան էլ թուրք ելաւ, աչքերս թրջվեցին, ամենքս ալ բացականչեցինք եւ սխալփախով լցրինք այդ թէկեւ աւերակ բայց զեռ հրաշալի շինութիւնը, մասնաւորապէս որ հիմա կաթողիկոսարանը

երբ մեր գիւղէն՝ որ մէկ ժամ հեռու է անկէ գէպի արեւմուտք, բարեկամներէն մէկուն հետ պատահեց մեզի այդ գիւղն երթալ, բոլորովին կը շուարէինք այն շարժումէն, այն ժխորէն, այն եռուզեռումէն ու կենդանութիւնէն, որ այդ գիւղի մէջ յատաճ կուգային: Ունէին հոյակապ զեղեցիկ եկեղեցի մը, զեղջուկապարզ վարժարան ու հասարակ վարժարան մը, 3-4 քահանայ, զիւղախմբակաւ, զիւղական ժողով, գրագիր ու զգիտ: Երբ կիրակուտ իրիկուն մը հանդիպէր մեզ եկեղեցի երթալ, սարսափած անոնց զիւրի զբարոյական տղոց մէջ կը խոնուէինք, լուռ ու մունջ կը զիտէինք այդ 4-500 առուն հայկական աւանի բարեպաշտական օրհներգն:

Այդ թուականներին Արթօն () ալ իրենց գիւղի առաջադէմ զպրօքականներէն էր: Օր մըն ալ տեղական սովորութեան համեմատ իր մայրը այրի տիկին Սիմա Մ. Տուաութեան կորոյն էր: Պոլսոյ վրայէն իրօքադէմ ուխտ երթալ իր մէկ հասակ Արթօնի հետ: Ուխտագնացութեան այս տեսքով տիկին Սիմա իր փոքրիկ աղջիկ Արուսեակը իր քոյր Ծօճէին ձգելով, 14-15 տարեկան պատանի Արթօն հետ առած՝ Պոլիս կուգայ: Պոլսոյ զպրօքական փայլն ու ուսման տեսչը փոքրիկ Արթօն միշտ անհանգիստ ընելով տիպիկ կուտան իրեն իր անմիթար մօր բոլոր փափաքներին հակառակ՝ եւ է միջոց գտնել զբարոյ մը ժանկու համար: Ու սակայն Հայաստանցի այդ խեղճուկ մայրը իր սրտին հետեւող, միշտ արգիլքներ կը հանէ անոր դէմ այդ նպատակին իրագործման համար, որպէս զի իր

() Հանգուցեալ Յ. Մ. Տուաութեանի մանկական անմեղ անունը զոր իր զօրախա մայրը մինչեւ վերջ կը գործածէր, ու իրենց ազգականներէն շատեր «Արթօն» անուամբ կը կոչէին զինքը:

մի գոմ էր դարձել, ուր գտնվում էին վանքի հորթերն ու ոչխարները: Համոզված եմ որ բոլորիս պատմել էլ անցաւ. — Ս: Խ, երբ պէտք է այս տեղանքները վերականգնեն, կամ թէ նոյն իսկ նոյն կիսաւերակ գրութեան մէջ պաշտամուտքի եւ մեծ հողածութեան վայրեր դառնան...: Սոջավանքի աւերակները զիտելուց յետոյ Սոջավանքի ձորը կարեցինք եւ բարձրացանք զէպի Անի: Երկուցեան մօտերը հասանք հայկական այդ հրաշակերտ բայց աւերակ քաղաքը: Մի փոքր կերակուր ուտելուց յետոյ, սկսեցինք պատել մօտակայ աւերակ շինութիւնների մէջ:

Որչափ հրաշալի բեկորներ, ինչ մեծ գեղարուեստի ճաշակ եւ հմտութիւն: Ամեն մի քարի, ամեն մի բլրին, ամեն աշտարակին ու վանքին մենք մօտենում էինք զողջով, սարսափով, յուզումով, աննկարագրելի ակնածութեամբ, ինչպէս ամենաշնորհ հաւատացեալ քրիստոնեան մօտենում է կեղեցու սեղանին հազարվելու համար:

Մենք բոլորս էլ շրջում էինք լուռ ու մունջ, ամեն մէկս մեր մաքրի ու խոհերի մէջ սուզված, փոքրիկով հայ պատմութեան խորքերը, մտաբերելով հայ դաւաճաններին եւ բոլոր նրանց որոնք պատճառ էին եղել ոչ միայն այս զեղեցիկ քաղաքի աւերվելուն, այլ եւ ամբողջ Հայաստանի կործանման:

(Շարունակելի)

մէկ հասիկ Արթուր չը գատուի իրմէն : Ու այս մտքով , կանաչաբոյն նա չուտով Պոլսէն մեկնելով զԼուի Երուսաղէմ հոգեկան այն քաղցր տրամադրութեամբ ինչ որ բնական է Հայաստանցի մօր մը : Երուսաղէմի մէջն ալ պատահի Արթուր նոյն փափաքն , և նոյն ըղձանքը կուենայ , ինչ որ ունէր հայրենիք ու Պօլիս , ու մայրը գարձաւ չուզիր :

ՊԵՏ
[Շարունակելի]

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն

Շ Ա Ն Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր

Երբ կերթաք ձեր տան համար նպարտաճան էր քիւր մը շաքար դնելու , երբեք հաշիւ ըրած էք թէ ինչ անպիտան տարբերութիւն կայ այդ նիւթը արտադրողին ստացած նախնական գինին եւ ձեր սպառողին վճարած վերջնական գինին մէջ : Եւ գիտե՞ք թէ ինչ է այդ տարբերութեան պատճառը . արտադրողի եւ սպառողի մէջ կեցած բազմաթիւ միջնորդներու խոշոր ֆաշաները լեցնելու սահմանուած կարգ մը ֆոնդիստներ , բրոսկերներ եւ սփերներ : Այս վերջինները երբեմն այնքան շատ են որ աղքատ-սպառող մը իր կեանքին պիտոյքը գոհացնելու համար յաճախ ստիպուած կը լլայ այսինչ նիւթի արտադրութեան գինին գրեթէ կրկինը վճարել :

Ասկից զատ մենք գիտենք թէ վաճառականութեան ամէն ճիւղերու մէջ նենգութիւն եւ խաբէրայութիւն մեծ դեր կը խաղան , եւ ով գիտէ քանի քանի խարդախ միջնորդներու նենգութեանը ենթարկուած է այն ձէթը , զոր աղքատ թաղի մը մանր նպարտաճանը կը հայթայթէ իր յաճախորդներուն :

Պէտք է հետեւցնել ուրեմն թէ ինչ որ ալ գնենք եւ ինչ գնով ալ գնենք երբեք չենք կարող վտանգ ըլլալ թէ անիկա կը լլայ սաճն եւ ընկիր :

Ի հարկէ տարբեր բան կը լլայր եթէ մենք ուղղակի արտադրողէն , ստանալինք մեր կեանքի պիտոյքը . սակայն ընտանիք մը որ տարին հազիւ 10-20 քիւր կամ քիւր մը աւելի սուրճ կ'սպասէ , ինչպէս կարող է ուղղակի Պրազիլիայէն ապսպրել 100 ստպրակ սուրճ որ 5,000 քիւր կը կռուի եւ 8,000 ֆրանք կարծէ :

Այժմ տ հարցը կը ներկայանայ , թէ ինչպէս կարելի է մեր ամենօրեայ պէտքերը հոգալ ուղղակի արտադրողէն կամ գոնէ սրբափ կարելի է թիչ միջնորդներու միջոցով :

«Միութիւնը» բարեկեցիկ մայրն է» կըսէ Եղիշէ . եւ ճիշդ այդպէս է : Մարդիկ երբ առանձին անկարող կը լլան բան մը ընել կը միանան եւ հաւաքական ուժի առջեւ կը հարթուին ամէն խոչընդոտներ : Այն բանը զոր ընտանիք մը առանձին չէր կարող ընել շատ կը զիւրանայ երբ միանան քանի մը հարիւր ընտանիքներ : Այդ միութիւնը կը կոչուի շահագոյծութիւն եւ ասիկա այն միակ միջոցն է որ աւելի սեղմ վիճակի մը պիտի վերածէ արտադրողի եւ սպառողի միջեւ եղած հեռաւորութիւնը , պիտի բարձրէ , բարձրէ աղքատին անտանելի կացութիւնը եւ պիտի հաւասարակուէ անոր քայքայուած կեանքը : Շահագոյծութիւնը որ քան օգտակար նոյնքան զորոնական եւ պարզ ձեռնարկ մըն է , բաւական է միայն կառնել եւ յարսեցնել :

ՏԻԳՐԱՆ ԱՃԻՄԵԱՆ

Թ Ղ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր

Ֆոքշան , 22 Մարտ

Մեր մէջ ախտ մը կայ , որ կարծեմ չի պիտի վերջանայ , մինչեւ չլուծուի մեր ազգային խնդիրը : Այդ ախտը խաչազողութիւնն է : Արդէն գոյութիւն ունեցող այս ապականութիւն շատ աւելի բազմապատկուեցաւ , երբ վրայ հասաւ մեր յիշափական շարժումն ալ :

Այս անբարոյցականութիւնը իր ամենէն լայն ծաւալը գտաւ քահանայական անբարիք տրտերու մէջ :

Անհաւատալի չթուի երբ ըսեմ թէ , այս վերջին քանի մը ամիսներուն մէջ , երկվեցեակը կանցնի իր լաւ ջանքանայ խաչազողներուն , որոնք Ռուսմանիոյ հայ գաղութին մէջ կը սողոսկին , արգեօք քանի՞երորդ անգամն Եւրոպայի շրջանին . . . :

Այս արարածներէն մէկը , մեր քաղաքէն մեկնած աստի , լրբարար կրտսէր . «Ես Ֆոքշանը բան մը կարծեցի որ վաղեցի եկայ , մեղք ճամբու ծախքիս» : Ինչու . . . որովհետեւ իր մտադրած գումարը իրեն տրուած չէր :

Ուրիշ մը , աներեսութեան ծայրագոյն տիպարը , քաղաքիս ազգայինները անիծելով մեկնեցաւ , որովհետեւ ինքը հասարակ քահանաներէն չէր , այլ ընտելալ («») մըն էր , պէտք էր աւելի տալ իրեն :

Գահանայ մը կարգը վրայէն ձգել կ'սպասուար , իսկ ուրիշ մը խաչազող բառը կ'ստուգարանէր , ըսելով թէ ես խաչ չեմ գողցած . . . : Ու այսպէս , հինգերորդը , վեցերորդը եւայլն :

Գահանայութեան համար կարգուած այս արարածները , քահանայէ զատ ամէն բան են : Կը ստեն , կը խարեն , գիտեալն ու ուրիշ տեղեր կը յաճախեն :

Մենք , ի հարկէ , պատրաստ ենք այս ամէնը հաստատել , պահանջուած աստեւ . միայն կուզենք Պատրիարքարանի ապիկարութիւնը ցոյց տալ այս գործին մէջ ալ , այսքան երկար աստեւներ գրուելէ ետքն իսկ :

Այս քահանաներուն համար մեր առաջարկութիւնը այս է պարզապէս , կարգաւորուիլ եւ եկեղեցական պաշտօնակառուցութեան տրամաբան :

Ինչ , միթէ աւելի արժէք ունին այսպիսիները , որոնք ազգի մը ամենէն դառն օրերուն , իրենց յանձնուած հօտը անհովիւ ձգած՝ կը պըտբախին ասպին անդին ծոյլ ծոյլ ու անպատիւ . . . :

Կ. Պոլսոյ կյանքի ժողովը , օրինաւորապէս ընտրուած Ալեքսանդր կաթողիկոս մը չեղեալ նկատելու համարձակութիւնը կուենանայ :

Ամենայն հայց կաթողիկոսի , ամէն օր անհարգատի եւ անդարձ տարբարի ամուսիններուն կը շնորհէ կրկնամուսնութեան օրէնքը , հինգերը լուծելով : Արդ , այս երկու ուժերը չհօն կարող միասին այս շարիթին ալ զեղծափ մը գտնալ :

Ղ. Կ.

Ռ Ո Ւ Ս Չ Ո Ւ Բ

Մեր Ռուսչուքի թղթակցին գրածներուն ամէն Ռուսչուքցի «ամէն» ըսելու արտաբայ չի բերուար : Մեզ հասած քանի մը թղթակցութիւններ են թագրել կուտան թէ Ռուսչուք կատարելալ «եղեմ» մը չէ—կը տարակուսէինք . — ընդհակառակը հոն ալ , ինչպէս ուրիշ տեղեր ուր հայերը

շատուար են , կիրք ու հայաւազութիւն իրենց գործը անարգել առաջ կը տանին , հեռուն ձգելով ազգային հաստատութիւններու հանդարտօրէն առաջըլմութեան գաղափարը որ լոկ համբաւալութեամբ կրնայ ձեռք բերուիլ :

Դեռ կատարելապէս ստուգած չենք թէ հոն ալ միեւնոյն յաւերտեական պայքարն է յետագիւնական ու յառաջդիմական ըսուած տարբերուն բարձրէն առաջ եկած :

Իայց սա ստույգ է որ այս պահու վարժարանի տեսչին անձին շուրջը կը դառնայ խնդիրը և գանդատներ կը պտտին անոր պաշտօնավարութեան եղանակը քննադատող :

Եւ իրաւ ալ , տարբեր միջավայրերու մէջ սնած մեծցած , տարբեր դաստիարակութեամբ տոգորուած անձ մը , քիչ մը բուռն , աշխուժ եւ խորիտ , անմիջապէս ընդհանուր հաւանութեան չպիտի հանդիպէր : Դիտենք նաեւ որ մեր ուսուցչայ եղբայրները՝ թերեւս կլիմայի կամ ուրիշ ու է ազդեցութեամբ շատ ճկուն ու համակերպող նկարագիր չունին , ու յանկարծ երեւնալով միջավայրի մը մէջ ուր բարքերը այնքան հնաւանդ են ու նոր երեւոյթներու հանդէպ խըտող , բնական է որ ըմբոստացումի պէս բան մը յարուցանեն իրենց դէմ : Մենք կը յուսանք սակայն թէ Պ. Սապահիլիւսան հոգեբանօրէն ուսումնասիրելով իր գտնուած միջավայրին հանգամանքները , պիտի ջանայ քիչ մը համակերպիլ աւելոր պայմաններուն , և թէ , Ռուսչուքի հայ հասարակութիւնն ալ , եթէ , ինչպէս կը սիրենք հաւատալ , եղած գանդատներուն շարժառիթները այնքան ծանրակշիւ չեն , որպէս վարժարանի իր կրթական զեկաւարին նկարագրին , աւելի վեհանձնօրէն պիտի վերաբերուի անոր նկատմամբ :

Ս Ա Լ Մ Ա Ս

Գաւրթէն մարտ 8 թուականով Մշակի գրուած թղթակցութիւն մը գարձաւ տխուր լուրեր կը հաղորդէ Սալմաստի հայերուն վիճակի մասին : Ամիր-Նիզամին առած խոստումները ապարդիւն կը մնան : Փետր. 25ին 200 ձիւտըր եւ 300 հետեւակ զօրք եւ պարսկահպատակ քրդեր Հաֆթվանը կը պաշարեն եւ անհնարին բարբարոսութիւններ կը գործեն , զէնք փնտռելու պատրուակով : Սալմաստին ողբաձայն հեռագրերու կողմէն Ամիր-Նիզամին եւ առաջնորդարանին : Սալմաստի ուսուցչօրդարանը նոյն իմաստով տեղեկութիւններ կը հաղորդէ Պարսիք հիւպատոսին , որ հեռագրեր ու նամակներ կը զրկէ Ամիր-Նիզամին շարադրածներուն պատժուիլը պահանջելով Ամիր-Նիզամը զարմանք կը ձեւացնէ իր

պաշտօնեաներուն ձեռքով եղած այդ վայրագութիւններուն համար :

Երբ Հաֆթվանցի հայերը Դաւրթի առաջնորդարանը կը լեցուն պաշտպանութիւն ուղեւ , Գաւրթիցիները կը ցնցուն ու կը հասկնան Սարաճեան վարդապետին անկարող ու թոյլ բնուէքը , կը հաւատան ինչ որ կորոչեն խնդրել առաջ . փոխանորդէն հըրաժարիլ ու հեռանալ : Սարաճեան կ. . . այս հրաժարականը եւ կը պատրաստուի 4-5 օրէն Էջմիածին երթալ , տանելով վեհ . կաթողիկոսին ուղղուած նամակ մը որով կը խնդրուի արժանաւոր եպիսկոպոս մը , որ ըլլայ սուսահպատակ , եւ երկու վարդապետներ , մէկը եպիսկոպոսի իրաւասութեան տակ , միւսը Սալմաստի վիճակին համար :

Տեւենք երբ Ատրպատականի ազգային իշխանութեան այս անկերպարան վիճակին պիտի փութայ գարման տանիլ վեհափառ Հայրիկ :

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Դ Ե Պ Բ Ե Ր

Ս Պ Ա Ն Ա Ե Ւ Մ . Ն Ա Հ Ա Ն Կ Ի Ն Ե Ր

Պատերազմը վերահաս է այս երկու երկիրներուն միջեւ : Ուսչինկիթընի սպանիական դիսպանը կը հաղորդէ իր կառավարութեան թէ գործերն աղէկ վիճակ չունին : Վարչապետ Պ. Սակապապետական մարզերու և զօրավարներու այցը կը ընդունի , որոնք կերթան իրենց աշակցութիւնը նուիրել իրենց հայրենիքին : Բոլոր սպանիական մամուլը հանրային կարծիքը կը պատրաստէ Մ. Նահանգներու հետ խզումի մը և կը պատուիրէ ժողովրդեան հանդարտ ու հաստատաբար մնալ : «Իրպարալ» կը հրատարակէ յոգուած մը յայտնող թէ Մ. Նահանգներու ընթացքը ցոյց կուտայ թէ նախագահը տեղի կուտայ մեծամասնութեան կարծիքին եւ թէ Սպանիա բան մը չի շահիր ու շացնելով անխուսափելի հետեւանք մը :

Հիմակ հաստատի Լեբեւայ թէ նախագահ Մաք Քիլի տեղի պիտի տայ երեսփ. ժողովին ու ծերակոյտին , ինչ որ առաջ պիտի լնրէ զիւրազրտական յարաբեթիւններու խզում մը Սպանիոյ հետ :

Մ. Նահանգներու ծերակոյտի արտաքին գործոց յանձնաժողովը ընդունել է իր մասնախումբին եղբակացութիւնները ի մասին Գուպաի անկախութեան և զայն ձեռք բերելու համար զէն ի ձեռքին միջնորդութեան : Ամերիկայէն եկած հեռագրեր կը ըսեն թէ կառավարութիւնը նախամեծար կը սեպէ ժամանակ շահիլ , որովհետեւ Մ. Նահանգներու պատերազմի պատրաստութիւնները չեն վերջացած դեռ : Ելմտական նախարարութիւնը բանակցութեան մէջ է ամերիկացի գլխաւոր դրամատէրներուն հետ պատրաստելու համար հինգ հարիւր միլիոն տոլարի փոխառութիւն մը պատեւալովի աստեւ :

—)(—)

Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ Ի Պ Ա Ս Ա Ս Ի Ա Ն Ա Տ Ո Ւ Ն

Երէկ, խմբագրութեանս ուղղակի նամակով մը, մեր թերթին պատասխանատուն Պ. Ղ. Թահմիսեան կը ծանուցանէր մեզ թէ այլևս հրատարակուած է Շարժումի պատասխանատու ըլլալէ:

Շարժումի պատասխանատու թերթը այժմ սիրալոյսով ստանձնեց հանրածանօթ պուլիտար փաստարան Տոքթ. Սթոյանով:

Խմբագրութիւն

Բ Օ Ւ Թ Ի Գ Ա

Պ Ո Ւ Կ Ն Ա Ր Ի Ա Վ Է Թ Ի Ի Բ Ի Ն

Սկիւզ պուլիտար մետրապոլիտի Տ. Սենեխիուսըն հազարներով թերթ հիւրըմէ թերթին վերադարձի գարաւոր կէտէնտէ ետքը ըտրք Երմատի, Սթանպուլտան շէքիլէն պիտ թէլէկրաֆա պագարագ պուլիտար մասլահաթի կիւզարը Մ. Մարքով Երազը սէրայընա պիտ յօթա վէրիկ Սկիւզ վալիսի Հաֆըզ բաշանըն պուլիտար հազարներ հըսուլյաթը ասալէթը քեարտէյի վէ պու բաշանըն թալէպի Ելէ մետրապոլիտ Սենեխիուսըն կէրի շաղըրմասընըն ֆէնա սէմէրէլէրինի կէսսթէրտիքսէն սօնրա, Հաֆըզ բաշանըն մէմուրիէթտէն աղընը վէ մէլըբիւր մետրապոլիտին աղընըն կէրի աղընմասընը Սուլթանտան բէճա իթմիշ տիր: Սկիւզ վալիսի թիւտէ իհալի թէմին իթմէք իշիւն պու թէտպիւրէրին իճրասը իղթիւզա ըմը:

Ս Պ Ա Ն Ի Ա Վ Է Ա Մ Ե Ր Ի Գ Ն

Մատրիտէն կէլէն թէլէկրաֆալարա կէօրէ Սպանիա հիւրըմէ թի կվորա սէվլէթիւրին միւտախէլէսինէ միւրաճաթ իտուպ Ամբրիգա իլէ քէնտի պէյնինտէ վուգու պուլան հատիսէյի սուլհէն պիթիւրմէլէրինի բէճա իթմիշ տիր: Եվորա սէվլէթիւրի կէօյա պու թէքիլի գապուլ իթմիշլէր վէ պու պապտէ քէքեար միւպատէլէ իթմէքտէ իմիշլէր:

Պուստան կվվէլ սէօյլէնմիշ իտիքի Բօմա բարը Սպանիա վէ Միւթթէմէաի Ամբրիգա պէյնինտէքի մարաղայը սուլհէն հալլ իթմէք իշիւն միւտախէլէ իտէճէք տիր: Սօն հալաթիսաթ պու շախայը թէքիլի իտիլօրլար:

Ամբրիգա հիւրըմէ թի պիտ Ալման ֆապրիգապընտան իքի թօրիթիթօ սաթըն ալմը շըր: Մէպուսան մէճիլիսի օն իքի եէնի թօրիթիթօլարըն միւպայէտարնա գարար վէրմիշ տիր:

Գիւսիւթտէն կէլէն հապէրլէրէ կէօրէ Ամբրիգա տօնանմասը իշէ պաշլամագ իշիւն պիտինծի նշանա պէքիլիքտէ տիր:

Հ Ա Վ Ա Տ Ի Ս Ա Պ

Թեատրիա հուսուտունը թախթիթ (գծել) իթմէք իշիւն Պապը Ալիաէն կվորա սէֆիւրէրինէ օլան թէքիլիք ճէվապէն էլլիլէր պիտ յօթա վէրիկ պու պապտէքի ամէլիաթընըն վագըթ միւտաիտ օլարընտա իճրա օլընաճաղընը պիտիւրմիշլէր տիր:

Բուսիա էլլիսի Մ. Ջինովիէվ կէլէն ճուսա կիւնիւ Սուլթան իլէ վուգու պուլան պիտ միւլագաթտա, եազընէն 2,000 եէնի ըուսասքէրինին կէօնիւլի տօնանմա վարօրլարըլա աքսաիւշարգա (ճայր. արեւելք) կիթմէք իշիւն պօղաղարտան կէլէնէկիւնի պիտաթիւրմիշլէր տիր:

Իւշ սէվլէթիւր թարաֆընտան թէմինաթ ալթընա ալընան Եունան իսթիգրաղը եազընտա իլան օլընաճաղընտան, էլլիլէր կէլէն հաֆթա իճթիմա իտուպ թեատրիանըն պօշատըլմասընա տայիտ էլէ ալընաճագ թէտպիւրէր իւզէրինէ միւլագաթէ իթմիշլէր տիր:

Աթիւտան «Աւմէնի» կազմաթընա եաղըրըղընա կէօրէ, օրատա մուգիմ գըրգ էրմէնի գաղթականլար Եունան գրալը իւզէրինէ կէլէնտէ իճրա օլընան ճիւնայէթ միւլագաթի իլէ, գրալա պիտ արիլէ թագաթիմ իտուպ մէլըբիւր ճիւնայէթտէն սուլալը Եունանիսթան էրմէնիլէրին պէօյիւք աճը վէ քէտէր հիւ իթմիշ օլարըլարընը պէյան իթմաթիքտէն օնրա գրալըն տաշա ուզուն սէնէլէր եաշամասընը ճէնապը հազտան թէմէննի իթմիշլէր տիր: Եունան գրալը պու ալթիլէյի (ուլերճ) գապուլ իտուպ գաղթականլար թարաֆընտան իմզա իթմիշ օլան Տոքթ. Կարապետ Ալագայէյի վէ Տ. Սերոքէ Կիւրճեանը սէրայա սալթիթ իթմիշ վէ էրմէնիլէրին պու հըսուլյաթը իշիւն թէլէքքիւր պէյան իթմիշլէր տիր:

Սուլթան Կ. Սթօյիլօֆըն իտաթալըգտան շիֆայապ օլմասընտան տօլայը միւշարիլէյի պա թէլէկրաֆ թէպրիք իտուպ, թիւրքիա իլէ Պուլիտարիա պէյնինտէ միւնաթպաթը տօլթանէնին պագը գալմասը իտուսընտա զայրէթտէ գուսուր իթմէլէճէյինի գալիլէն մէմուլ իթմիլիլինի պէյան էլլէմիշ տիր:

Եունան մէպուսան մէճիլիսի եէնի իսթիգրաղըն ագտընա տայիլը հիւրըմէ թի թարաֆընտան թագաթիմ օլուսան նիզամը գապուլ իտուպ րաղըրմը շըր: Բիվայէթէ կէօրէ շիմաթի մէպուսան մէճիլիսի պուստան պէօյլէ թօրլանամայաճագ տըր, զիւրա գրալ էհալլ թարաֆընտան եէնի պիտ ինթիլիապ իճրա օլընմասընը էմը իտէճէք իթմիշ:

Մուհարէպէ թաղմինաթընըն թէլէտիլէսի, Կիւրիտ մէսէլէսի վէ

գօնթ Մուրափիլէֆին Պապը Ալիլէ կէօնտէրմիշ օլուսը պիտ յօթա հազարներ պաղը իշլահաթ վէրմէք իւզրէ Բուս սէֆիւրի Մ. Ջէնովիէֆին Սուլթանըն հուլարընա գապուլ օլուսըլընա տայիլը կէլէն շայէա թէքիլի օլուսմը շըր:

Եունանիսթան մալիէ նալըրը Մ. Սթրէյթ իսթիֆա վէրմիշ օլուպ պու իսթիֆա գապուլ օլուսմուշ տըր: Գրալ Եորկիտըն Լալրա մանաթըրընտան ալտէթիւտէ եէնի գապիլէ թէլէքիլ օլընաճագ տըր:

Եունանիսթան հիւրըմէ թիւն թիւրք հիւրըմէ թիւնէ թէտիլէ իտէճէկի թագմինաթը հարալիլէ օմանլը պանգասընա վաղ օլընաճագ տըր:

Ճիտտէ է եուսուրճագ հասթալըրընա իթմիլի սէպէպլէ, Գըրմըզը սէնիլաէն կէլէն Եօնուլար եալընըլ Վառնա վէ վէ Պուրկաղ լիմանլարընա շըգապիլէճէքլէր վէ պիտ թապիպ թարաֆընտան մուսլէնէ օլընըլ էլպիսէ իլէ էշալարը «սէլէնֆէքցիտ» ուսուլի իլէ թէմիլլէնէճէքլէր տիր: Պի այնի գարա թարլիլլէ Պուլիտարիայա կիւրէն Եօնուլար Հէպիլաճէտէ մուսլէնէ օլուսըլար:

Գըրմըզը սէնիլաէն կէլէն Եօնուլարըն տիկէր պիտ մահէլտէն Պուլիտարիայա կիւրմէլէրի գաթիլէն մէն օլընմը շըր:

Ղալը վագըթտան պէրի Սթանպուլտա պուլուսան Վառնա օմանլը թիւճճար վէքիլի Բէֆիք պէյ իքի կիւն էվվէլ Սթանպուլտան Վառնայա կէլմիշ տիր:

Քէլա պուրա Ֆրանսըզ վիւքօնսօլսը Վարնայա միւվասէլէթ իթմիշ տիր:

Բէքիւտէն շէքիլէն թէլէկրաֆալարա կէօրէ, Ինկիլթէրա էլլիսի տիկէր տէվլէթիլէր վէրիլէն իսթիպաղարա պէտէլ օլմագ իւզրէ, Ջին հիւրըմէ թիւնտէն Ինկիլթէրա իշիւն եէնի իմթիպաղար թալէպ իտէճէք իմիշ:

Աթիւտ ճիւնայէթ մահքէմէսինտէն իտամ ճէլապընա մահքիւրմ օլմուշ օլան Գարաթիցի վէ շէրիքի թէմիլ մահքէմէսինէ միւրաճաթ իթմիշլէր տիր:

Ա Ջ Դ

Թուամնիոյ Ֆօքշան քաղաքի հայոց եկեղեցւոյն համար կուղուի քաշահմուտ երաժիշտ մը որ տնեկայ ախորժալուր ճայն, գովելի նկարաղիւր և 30—40 տարիք:

Փափաքողներն դիմեն առ՝ M. F. Ferhatian à Focsani en Roumanie

—(—)

Թ Է Ա Թ Բ Օ

—(—)

Պու կիլէ Սլափօֆըն թէաթիւսընտա կայէթ կիւղէլ պիտ տուամ օյնանըլաճագ տըր, «Ալեքսիւնալի տուամը» եալիտ 1876 թիւրք Սերպ մուհարէպէսի: Պուլուպիաթըն լայըրը սուրէթտէ վուգու պուլմասը իշիւն հէր կէօնա թէտպիւր էլէ ալընմը շըր:

Պ Օ Ր Ս Ա

Վառնա 28 Մարտ:

Պ Ո Ւ Ղ Տ Ա Ց Վառնա, լիպրա 47—51, հէքթօլ. 9.21—9.81 ֆրանք Արապա, լիպրա 47—55 հէքթօլ. 8.51—11.41 ֆրանք

Ա Ր Բ Ա լիպրա 38—40 հէքթօլ 4.60—5.20 ֆրանք

Մ Ր Ս Ր Ր Վառնա, լիպրա 57—58 հէքթօլ. 6.41—6.51 ֆրանք Արապա, լիպրա 57—60 հէքթօլ. 6.60—6.80 ֆրանք

Ֆ Ա Ս Ո Ւ Լ Ե Ս 100 օգգասը 18—22 ֆրանք՝ մալա կէօրէ

Առապա մուսմէլէսի Նարօլէն 21 ֆրանք հիւսաղը իլէ տիր:

Կիւնալ 8—10 վալիսի վէ 15—20 արապա պուլտայ, 10—15 արապա արբա, 4—5 վալիսի վէ 8—10 արապա մըսը կէլմէքտէ տիր:

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հայ Գաղթականութեան Ի Հնդկաստան

Հնդկաստանի հայ գաղութի մասին պատմական եւ ազգագրական խիստ շահեկան տեղեկութիւններ պարունակող սոյն անգլիերէն երկասիրութիւնը, գոր հեղինակը, Տիար Մեսրոպ Սէթեանց՝ Կալիփոլայէն զրկած է մեզ, կարճէ որ ամէն անգլիազէտ ազգայիններու թանգարանին մէջ գտնուի:

Գ Ի Ն Ե Շ Ի Լ Ի Ն

Կեղրոնտեղի Վառնա Ապաիւրաճման մզկիթի դէմը, Ա. Ջարպանէլեան Հայկական Գրատան մէջ:

Տ Պ Ա Ր Ա Ն, Ն Ս Ր Ժ Ո Ւ Մ Ի Ի

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեատմս, հասցեատմս, նամակաղրախ, հարսանեկան հրաւիրագիր, մահազգ, ինչպէս նաև պրօշիւռներ:

Գիւնըն յոյժ դիւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ

—(—)

Վառնաի մէջ կը վաճառուի Մուսալա, թահմիլ կէղիպէօյիլէքանի խանութը, Սասուն սրճարանի ծխավաճառին քով եւ Ապաիւրաճման մզկիթին դէմը հայկական գրատունը, Ա. Ջարպանէլեանի քով:

Печатница „Взаимность“ Варна.